ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

2017թ. սեպտեմբերի 23 N 175 -Ա

ԹԱԼԻՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏԻ ԿՈՂՄԻՑ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՁՄԵՌԱՅԻՆ ԶՈՐԱԿՈՉԻ 1990-1999ԹԹ. ԾՆՎԱԾ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԲԺՇԿԱԿԱՆ ՍՏՈՒԳՈՒՄԸ ԵՎ ԶՈՐԱԿՈՉԸ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Զինապարտության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ և 17-րդ հոդվածների պահանջներով Թալինի զորակոչային տեղամասում 2017 թվականի ձմեռային զորակոչը կազմակերպված անցկացնելու նպատակով՝ ***կարգադրում եմ.***

1. Թալինի տարածքային զինվորական կոմիսարին՝

1) 2017 թվականի սեպտեմբերի 25-ից սկսել 1990-1999թթ. ծնված քաղաքացիների զորակոչի բժշկական հանձնաժողովի աշխատանքները և անցկացնել 1990-1999թթ. ծնված քաղաքացիների զորակոչը,

2) զորակոչել արական սեռի այն զորակոչիկներին, որոնց 18 տարին լրանում է մինչև 2017 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ, ինչպես նաև այն քաղաքացիներին, որոնց նախկինում տրված տարկետումների ժամկետները լրացել են:

2. Հաստատել՝

1) զորակոչային հանձնաժողովի կազմը համաձայն N 1 հավելվածի,

2) զորակոչիկների բժշկական ստուգումներն անցկացնող հանձնաժողովի կազմը համաձայն N 2 հավելվածի,

3) զորակոչիկների ընտանեկան, գույքային և նյութական ապրելակերպի պայմաններին ծանոթանալու համար ստեղծված հանձնաժողովի կազմը համաձայն N 3 հավելվածի,

ա. հանձնաժողովի կողմից կազմված ակտերը ներկայացնել Արագածոտնի մարզային զորակոչային հանձնաժողովի հաստատմանը:

3. Մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության

վարչության պետին՝

1) ապահովել բժշկական հանձնաժողովի բոլոր անդամների պարտադիր ներկայությունը զորակոչային հանձնաժողովի աշխատանքներին,

2) բժշկական ստուգման և զորակոչի օրերին զորակոչային և բժշկական հանձնաժողովի անդամներին ազատել իրենց աշխատանքային պարտականություններից:

4. <<Թալինի բժշկական կենտրոն>> ՓԲԸ գործադիր տնօրենին՝

1) կազմակերպված անցկացնել զորակոչի ենթակա բոլոր զորակոչիկների արյան խմբերի և ռեզուս-ֆակտորի որոշումը, արյան, մեզի անալիզները և մնացած անհրաժեշտ հետազոտությունները,

2) ժամանակին կազմակերպել այն զորակոչիկների բուժումը, որոնք զորակոչային հանձնաժողովի կողմից ուղարկվել են բուժման,

3) հանձնաժողովին ապահովել անհրաժեշտ գույքով, հատուկ բժշկական սարքավորումներով, դեղորայքով,

4) զինկոմիսարիատի հայտով հատկացնել մեկ սանիտարական մեքենա՝ զորակոչիկներին Հանրապետական հավաքակայան տեղափոխելու համար:

5. Թալինի տարածաշրջանի համայնքների, հիմնարկ-ձեռնարկությունների ղեկավարներին՝

1) օժանդակել զորակոչիկների ժամանակին ներկայանալուն զինկոմիսարիատ՝ համաձայն զինկոմիսարիատի ներկայացրած չվացուցակի և անհատական ծանուցագրերի:

6. Բոլոր համայնքների ղեկավարներին՝ զորակոչից առաջ զինկոմիսարիատի հետ միասին մանրամասն ճշտել զորակոչիկների տվյալները:

7. Հանձնարարել Թալինի ոստիկանության բաժնին՝

1) ապահովել հասարակական կարգի պահպանումը զորակոչի տեղամասում,

2) զինկոմիսարիատից ստացված տվյալների հիման վրա կազմակերպել այն անձանց որոնումները, որոնք խուսափում են ներկայանալ զորակոչային տեղամաս:

8. Սույն կարգադրության կատարման պատասխանատվությունը դնել Թալինի զինվորական կոմիսար, փոխգնդապետ Հ.Ասլանյանի վրա:

Ա.ՍԻՄՈՆՅԱՆ

Հավելված N 1
ՀՀ Արագածոտնի մարզպետի
2017թ. սեպտեմբերի 23-ի
N 175-Ա կարգադրության

Կ Ա Զ Մ Ը

Թալինի տարածքային զինվորական կոմիսարիատի ձմեռային զորակոչային հանձնաժողովի

Հ.ԱՍԼԱՆՅԱՆ - Թալինի տարածքային զինվորական կոմիսար, փոխգնդապետ, հանձնաժողովի նախագահ

Ս.ԹՈՐՈՍՅԱՆ - Հայաստանի Հանրապետության Ոստիկանության Արագածոտնի մարզային վարչության Թալինի բաժնի պետի տեղակալ, փոխգնդապետ

Խ.ՏԵՐՏԵՐՅԱՆ - Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի ք.Թալինի քաղաքապետի տեղակալ

Գ.ՎԱՐԴԱՆՅԱՆ - հանձնաժողովի ավագ բժիշկ

Հ.ԽԱՉԱՏՐՅԱՆ - հանձնաժողովի քարտուղար

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ Արագածոտնի մարզպետի
2017թ. սեպտեմբերի 23-ի
N 175-Ա կարգադրության

Կ Ա Զ Մ Ը

Թալինի տարածքային զինվորական կոմիսարիատի ձմեռային

զորակոչային բժշկական հանձնաժողովի

Գ.ՎԱՐԴԱՆՅԱՆ	- քիթ-կոկորդ–ականջ, ավագ բժիշկ
Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆ	- սրտաբան
Ս.ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ	- թերապևտ
Ա.ԱՌԱՔԵԼՅԱՆ	- վիրաբույժ
Լ.ՍԵԽԼԵՅԱՆ	- ակնաբույժ
Ա.ԳԱԼԵՅԱՆ	- մաշկավեներաբան
Ս.ԳՐԻԳՈՐՅԱՆ	- նյարդաբան
Կ.ԳՐԻԳՈՐՅԱՆ	- հոգեբույժ
Հ.ՍԱՆԹՈՅԱՆ	- բուժքույր

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

Հավելված N 3
ՀՀ Արագածոտնի մարզպետի
2017թ. սեպտեմբերի 23-ի
N 175 -Ա կարգադրության

Կ Ա Զ Մ Ը

Զորակոչիկների ընտանեկան, գույքային և նյութական ապրելակերպի պայմաններին ծանոթանալու հանձնաժողովի

Տ.ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ - Թալինի զինկոմիսարիատի զորակոչային բաժանմունքի պետ, ավագ լեյտենատ, հանձնաժողովի նախագահ

Ս.ՀՈՎՍԵՓՅԱՆ – Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ

Խ.ՏԵՐՏԵՐՅԱՆ - Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի ք. Թալինի քաղաքապետի տեղակալ

համայնքների ղեկավարներ - ըստ բնակավայրերի /համաձայնությամբ/

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ